«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ

14» հունվարի 2026 թ.

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ Լ/Ա Կ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻՆ

/էլ. հասցե՝ sikhachatryan@telecomarmenia.am/

Հարգելի՛ պարոն Ասատուրյան,

Տեղեկացնում եմ, որ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի 2025 թվականի կարիքների համար առաջացել է **էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների** ձեռքբերման անհրաժեշտություն, որի նպատակով «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի կողմից կազմակերպվում է «ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ:

Գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ, ք.Երևան, Կորյունի փող. 15 հասցեով, «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի, գնումները համակարգող, Հ. Ղազարյանին: Հայտը կարող է ներկայացվել նաև էլ. եղանակով, բնօրինակից արտատպված /սկանավորված/ ձևով ուղարկելով info@smarttender.am էլ. փոստի հասցեին, որը պետք է հասցեագրված լինի գնումները համակարգող Հ. Ղազարյանին:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է: Մասնակցի կողմից ներկայացվող հայտը ներառում է գնային առաջարկ (Հավելված N 1), որը Պատվիրատուին է ներկայացվում Մասնակցի կողմից հաստատված գրությամբ: Առաջարկվող գինը ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով, ընդ որում՝ **մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության միավորի գինը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝**

ՎԳ=ՄԳxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն մեկ կՎտ/ժ գինն է.

Ք-ն փաստացի սպառված կՎտ/ժ-ի քանակն է:

Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ստորագրող ՏԱԹԵՎ ԱՍՐՅԱՆ 6305940207 2026-01-14 17:49:29 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Տ.ԱՍՐՅԱՆ**

Հավելված 1
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01 » ծածկագրով
մեկ անձից գնման ընթացակարգի հրավերի

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ԻՆ

ՀԱՅՏ

«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույնով «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի կողմից կազմակերպված մեկ անձից գնման ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված մեկ անձից գնման ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գնով.

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Միավորի գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ	100	20	120 /մեկ հարյուր քսան/

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ Լ/Ա՝ Կ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Signed by: KAREN ASATURYAN 4010830662
Date: Wed, 14 Jan 2026 17:19:46 GMT+04:00

(ստորագրություն)
Կ.Տ

«14» հունվարի 2025թ.
(ամսաթիվը, ամիսը)

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01

«14» հունվարի 2026թ.

ք. Երևան

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Տ.Ասրյանի, որը գործում է ՊՄ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, Կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար Կարեն Ասատուրյանի, որը գործում է 13.08.2025թ տրված լիազորագրի հիման վրա (նույնականացման քարտ՝ 014881320, տրված՝ 16.03.2023թ., 011-ի կողմից) (այսուհետ՝ Կատարող),մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 2):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է **մինչև 651,800 (վեց հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Ընդ որում ծառայությունների մատուցման միավորի գինը կազմում է 120 (մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 30%-ը, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն մեկ կՎտ/ժ գինն է.

Ք-ն փաստացի սպառված կՎտ/ժ-ի քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի Վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ	**Կ ա տ ա ր ո ղ**
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,	ՀՀ, ք. Երևան,Ազատության 24/1
Հայաստանի Հանրապետության ֆինանսների	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1570004866031000
Հ/Հ՝ 900011019057	ՀՎՀՀ՝ 02500052
ՀՎՀՀ՝ 00171676	Տնօրենի լ/ա՝ Կ.Ասատուրյան
Գլխավոր քարտուղարի պարտականությունները	
կատարող՝ Տ. Ասրյան	Signed by: KAREN ASATURYAN 4010830662 Date: Wed, 14 Jan 2026 17:20:25 GMT+04:00
Ստորագրող ՏԱԹԵՎ ԱՍՐՅԱՆ 6305940207 2026-01-14 17:53:26 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԻ-ի կողմից /ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1
«14» հունվարի 2026թ. կնքված

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ծառայության			
չ/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	63711270	էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ	Կատարողը պետք է իրականացնի «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների մատուցում: • Պրոդուկտի անվանումը՝ Team Energy • Լիցքավորման սարքի նկարագրությունը՝ էլեկտրական մեքենաների արագ լիցքավորման ծառայություն, որն իրականացնում է DC տիպի հոսանքի փոխանցում՝ CCS1; CCS2; GBT կոնեկտորների միջոցով: • մեկ միավոր VOLVO EX40 մակնիշի,015 LL 55 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի համար անհրաժեշտ միակցիչի տեսակը՝ CCS2, GBT • Լիցքավորման հոսանքի տեսակը՝ DC (գերարագ լիցքավորում, fast charge), Երևան քաղաքում գտնվող կայանների Առավելագույն հզորությունը՝ կախված տեղակայման վայրից՝ ք. Երևան Մեգա Մոլ Արմենիա – 160 կՎտ/ժ Կարեն Դեմիրճյան Մարզ. Համալիր– 160 կՎտ/ժ ԵրևանիՊոլիտեխնիկական Համալսարան – 160 կՎտ/ժ Դավիթաշեն Թիմ Տելեկոմ– 160 կՎտ/ժ Ձեյթուն Երևան Սիթի – 160 կՎտ/ժ Գարաժ Մաստեր Մոլ – 160 կՎտ/ժ Չարենց – 160 կՎտ/ժ Ավան – 140 կՎտ/ժ ԱստղիկԲԿ – 80 կՎտ/ժ Երևան Սիթի Կոմիտաս – 160 կՎտ/ժ ՏԻՏԱՆ ՕԻԼ – 80 կՎտ/ժ ՄՈՒԼՏԻ ՄԵՋԻՔ ՄՈԼ – 160 կՎտ/ժ ՖանարջյանԲԿ – 60 կՎտ/ժ Զվարթնոց Օդանավակայան – 160 կՎտ/ժ Մերգելյան ԳՀԻ – 160 կՎտ/ժ: Մարզեր ՝ Տավուշ «Գետափ» Դիլիջանի ռեստորանային և հյուրանոցային համալիր» ՀՀ, ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 44 «Դիլիջան հյուրանոց և ռեստորան» ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, թողուտի 2-րդ փ. 1/1 Նոյեմբերյան , ՀՀ տավուշի մարզ, գ. Հաղթանակ, 6-րդ փող. Վայոց ձոր՝ «Գրանդ Ռեզորթ Ջերմուկ» ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Շահումյան փ. 7/5 «Եղեգնաձոր» Ֆուդ-Կորտ ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 7 «Վայք» հյուրանոց ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճուղի 10/1 Վայք ՀՀ, Վայոց ձորի մարզ, հ.Վայք, գ. Ջառիթափ, 25-րդ փոխ.29 հ Կոտայք «Ալգա» ռեստորան ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ, Քոչինյան փ. 15/13 «Բյուրակն» ռեստորան ՀՀ, Կոտայքի մարզ, հ. Ակունք Եկեղեցու փողոց 10 «Ակունքի Դրախտ» ռեստորանային համալիր ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք «Խնոցի ռեստորան» ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ 3-րդ դաշտ 7/6 «Հին Ջրվեժ» ռեստորան ՀՀ, Դիլիջան, Կալինինի փ. 104 «Պապանինո Հաուս» ռեստորան ՀՀ, ք. Դիլիջան, Կալիլինի փ. 104 «Լաքշրի Գարդեն Գառնի» հանգստյան գոտի ՀՀ, մարզ, Կոտայք գ. Գառնի Ազատամարտիկների խճ. 77/7 «Ծովագյուղ» Ֆուդ –կորտ Ծովագյուղ ֆուդ կորտի հարևանությամբ Արագածոտն «Բյուրական Պանդոկ» ռեստորան ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Բյուրական 1-ին փ. 6-րդ նրբ., 1/1 «Աշտարակի Ձոր» ՀՀ, ք. Աշտարակ, Արագածոտն, Քասախի կիրճ 1 Շիրակ «Ղարս ռեստորան» ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի-Արմավիր մայրուղի, 2 նրբ., տ1 «Փարվանա Օջախ» ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ազատան Լոռի Թուֆենկյան Ավան «Ձորագետ» հյուրանոց ՀՀ, 2035, Լոռու մարզ, Ձորագետ գյուղ Գեղարքունիք Թուֆենկյան Ավան «Մարակ Ծափաթաղ» հյուրանոց ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծափաթաղ 1611 Սյունիք Շինուհայր ՀՀ, Սյունիքի մարզ, հ Գորիս, Շինուհայրի խաչմերում Կապան ՀՀ, Սյունիքի մարզ, հ. Կապան, ք. Կապան, Գործարանային փ. 17/4

			Լիցքավորման գործընթացը Team Energy հավելվածի միջոցով: 1. Ներբեռնել և բացել Team Energy հավելվածը: 2. Մուտք գործել Team Energy հաշիվ (accaunt): 3. Գտնել և ընտրել ակնկալվող լիցքավորման կայանը քարտեզից: 4. Միակցել CCS2 կոնեկտորը էլեկտրական մեքենային: 5. Հավելվածում ընտրել CCS2 միակցիչը: 6. Ընտրել լիցքավորման ակնկալվող ծավալը (կՎտ): 7. Ընտրել վճարման եղանակը. Կորպորատիվ հաճախորդներ՝ հասանելի կՎտ սահմանաչափ 8. Սեղմել «Միացնել» կոճակը: Օգտագործման օրինակ: Ենթադրենք մեքենայի մարտկոցի ծավալը 50 կՎտ է, սակայն օգտատերը ընտրել է լիցքավորել 70 կՎտ, ապա լիցքավորման ավարտից անմիջապես հետո հավելվածը ցույց կտա, թե իրականում քանի կՎտ լիցքավորվեց մեքենան, իսկ ավելացված ծավալը ավտոմատ կերպով կվերադարձվի հաճախորդի հասանելի կՎտ սահմանաչափին:
	Ընդամենը		

***Ծառայությունների մատուցման ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30. 12.2026 թվականը:**

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019057
ՀՎՀՀ՝ 00171676
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝ Տ. Ասրյան

Ստորագրող
ՏԱԹԵՎ ԱՍՐՅԱՆ
6305940207

2026-01-14 17:40:57 GMT+04:00
Հանձնաժողովի էլեկտրոնային կնիքից

/ստորագրություն/
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան,Ազատության 24/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004866031000
ՀՎՀՀ՝ 02500052
Տնօրենի լ/ա՝ Կ.Ասատուրյան

Signed by: KAREN ASATURYAN 4010830662
Date: Wed, 14 Jan 2026 17:21:10 GMT+04:00

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«14» հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
1	63711270	էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ	651800	651800	651800	651800	651800	651800	651800	651800	651800	651800	651800	651800	**651800**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019057
ՀՎՀՀ՝ 00171676
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Տ. Ասրյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան,Ազատության 24/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004866031000
ՀՎՀՀ՝ 02500052
Տնօրենի լ/ա՝ Կ.Ասատուրյան

Signed by: KAREN ASATURYAN 4010830662
Date: Wed, 14 Jan 2026 17:21:53 GMT+04:00

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«14» հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_ _» «__ __» 201 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«14» հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4

«14» հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.
(առկայության դեպքում)

«--» 20 թ